

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 1.** «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 14-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում.

1. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում.».

2. ուժը կորցրած ճանաչել 15-րդ կետը:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «պաշտոն» բառից հետո լրացնել «(բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի)» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 3.** Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաև համայնքային ծառայության» բառերը:

**ՀՈԴՎԱԾ 4.** Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրային ծառայության պաշտոնում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում հանրային ծառայողը օրենքով սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ և այլն) ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման:»:

**ՀՈԴՎԱԾ 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: